

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012 թվականի երկրորդ կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

1. 2012 թվականի երկրորդ կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում՝

• աշխատանքի է ընդունվել 17 մարդ, որից՝	
քաղաքացիական ծառայության պաշտոններում՝	9
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝	6
տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոնում՝	1
• աշխատանքից ազատվել է 17 մարդ, որից՝	
ՎՊԽ անդամ	1
քաղաքացիական ծառայողներ	12
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում նշանակվածներ՝	4

2. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 9 մրցույթ:

3. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով առավելագույն՝ ՀՀ քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճաններ են շնորհվել երկրորդ ենթախմբի գլխավոր պաշտոններ զբաղեցնող 6 քաղաքացիական ծառայողի, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 18 քաղաքացիական ծառայողի:

4. Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար և կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են՝	12	32
Ատեստավորվել են՝	25	74

5. Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի, «ԷԼԼՆԱՐ» ռուս-հայկական դիստանցիոն տեխնոլոգիաների Կենտրոնի, Մոսկվայի սերվիսի պետական համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի և Գյումրու պետական մանկավարժական համալսարանի թվով 125 ուսանողների համար:

6. ՀՀ ԱՎԾ Նախագահի հրամանով 2 քաղաքացիական ծառայողներ, իսկ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով՝ 5 քաղաքացիական ծառայողներ խրախուսվել են շնորհակալագրով:

7. Հայաստանի Հանրապետության Նախագահի 23.05.2012թ. ՆՀ-118-Ա հրամանագրով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գագիկ Գևորգյանը պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով: